

կնգուղէ մը՝ երկու կողմէն բաց, եւ սեւ ուրաքէ մը մինչեւ ոտքերը:

Անոնք ընդգրկեցին Դոմինիկեան եղբայրներու տարազը, սպիտակ կապայ, սեւ ուրար եւ սեւ փիլոն, աւելի նուրբ գործուած:

Եղբայր Մարտին մեծաւորը 1337ին տակաւին ողջ էր, ինչպէս հողային վաճառում մը ցոյց կու տայ. անկէ վերջ իր անունը չի յիշատակուիր: Մենք Լեհաստան գրուած ձեռագիր մ'ունինք Եղբայր Մարտինի գործ, սակայն կը խորհիմ թէ պարզապէս անունի զուգադիպութիւն է:

Բարսեղեաններու դժբախտութիւնն այն եղաւ որ օտարութեան մէջ չգտան հայ կոչումներ եւ փրկայի ու ձենովայի թեմերէն առին իրենց ժառանգները:

Հակառակ որ հողային յաւելումներ ունեցան տարիներու ընթացքին, սակայն տակաւին մինչեւ 1357 կեանքի կարօտ էին. ձենովայի Պոքքանեկրա դուքսը դիրենք տուրքերէ վերծ հոչակած է օգնելու համար:

Մինչեւ 1490 թուականը սուրբ Բարսեղի կանոններով առաջ գացին. այդ տարին իննովկենտրոս Ը. Սրբղ. Պապը յատուկ հրամանագրով նոր սահմանադրութիւն մը տուաւ, պարզեցեց Դոմինիկեաններու առանձնաշնորհութիւնները, եւ Օգոստինեաններու կանոնները մտցուց նոր սահմանադրութեան մէջ: Պահեցին Բարսեղեան անունը, ճանչցան այդ մեծ հայրապետը իբր հիմնադիր ու պաշտպան միաբանութեան, առանց անոր օրէնքները պահելու:

Այլեւս հայութենէ աւրած միաբանութիւն մ'էր աւ մեզ պիտի չհասարակէր՝ եթէ Եզեսիոյ Աբգար թագաւորէն մնացած Յիսուսի դաստառակը չհասնէր ձենովա եւ Ս. Բարթողիմէոսի վանքին մէջ վերջնականապէս չհանգէր:

Քրիստոսի այս նկարն անշուշտ խոր հրնութիւն ունի եւ գիտնականները դայն աղեքսանդրեան դպրոցի գործ կը համարին:

Եւտերիոսի եկեղեցական պատմութեան ժամանակներէն ծանօթ էր այն զրոյցը թէ

Եզեսիոյ Աբգար թագաւորը լսելով Յիսուսի համբաւը՝ ուղեց իր մօտ հրաւիրել. երբ մերժուեցաւ իր խնդրանքը՝ զրկեց Անանիա անունով նկարիչ մը, գէթ պատկերը բերելու: Անանիա չյաջողեցաւ նկարել Եզեսիոյնի տիպարը, եւ Յիսուս առնելով պատառը՝ դրաւ իր գէմքին, ապաւորեց կնաւին վրայ իր աստուածային գէմքը եւ տուաւ ապշահար նկարիչին:

Շատ հին ժամանակ այս դիմանկարը Եզեսիոյ մէջ հայերու սեփականութիւն էր եւ հոչակաւոր ուխտատեղի էր իր անունով կառուցուած վանքն ու եկեղեցին: Պոլսոյ Ռոմանոս Լեկաբէն կայսրը Ս. Դաստառակը Պոլիս փոխադրեց եւ ոսկեղէն շրջանակի մէջ անցուց:

Դաստառակը տակաւին պէտք էր ճամբորդել Բերկէ երկիր: Լէոնարտոյ Մոնթալտոյ ձեռնովացի իշխան մը, որ յետոյ դուքս եղաւ նոյն հանրապետութեան, երբ 1372ին տակաւին դեսպան էր Պոլսոյ Յովհաննէս Ե. կայսեր մօտ, թանկագին ծառայութիւններ ցուցաւ եւ կայսրը գինքը վարձատրելու համար նուիրեց Ս. Դաստառակը իր ոսկեղէն շրջանակով:

Մոնթալտոյ՝ ծանօթ էր աւ բարեկամ լատինացի Բարսեղեաններուն, որոնց հետ զրացի ալ էր, 1384ին մասնաւոր կը տակով սուրբ պատկերը նուիրեց անոնց՝ իբր իր մահուան յիշատակ: Ս. Դաստառակը ունեցաւ իր յատուկ խորանը. եւ վեց տարի յետոյ արդէն 15,000ի հասնող եղբայրութիւն մը կազմուած էր իր անունով: Այժմ դարերէ ի վեր Ս. Բարթողիմէոս եկեղեցիին ամենաթանկագին նշխարն է, եւ Իտալիոյ նուիրական ուխտատեղիներէն մին:

Ս. Բարթողիմէոս եկեղեցին հոչակաւոր կը դառնայ նաեւ 1430ին երբ Պենեւէնթոյէն հոն կը փոխադրեն Հայաստանի առաքեալին ոտքերէն մասունք մը: Մասունքը պատճառ կը դառնայ որ ձենովայի թեմին մէջ բազմաման հայ առաքեալին անունով եկեղեցիներ, Բարսեղեաններու եկեղեցին աւագութեան աստիճան առնէ, եւ այլ ուխտատեղիներ անցնին այդ եր-

բեմնի արեւելեան հիմնարկութեան գերիշխանութեան տակ:


Ս. Բարթողիմէոս՝ փորագրիչներու պաշտպան սուրբը ճանչցուած է, որոնք վանական եկեղեցիներու մէջ պատկերացուցած են անոր կեանքը եւ ահաւոր նահատակութիւնը Հայաստանի մէջ:

Բայց եկեղեցիին ամէնէն թանկագին նկարը այժմ կեդրոնական խորանին վրայ դրուած եռագէտ պատկերն է, գործ փիզացի Թուրքիոյ վանքի նկարիչին, ձիթթոյի դպրոցէն:

Նկարիչն յատկապէս այս եկեղեցիին համար գծած է այդ գեղեցիկ իւզանկարը, որուն կեդրոնը բազմած է Տիրամայրը եւ շուրջը լատին սուրբեր ու սրբուհիներ: Մասնաւոր տեղ ունին Ս. Բարթողիմէոս եւ Ս. Բարսեղ՝ իբր հիմնադիր Միաբանութեան:

Շատ աւելի հետաքրքրական են պատկերի պատուանդանին վրայ նկարուած հինգ քառակուսիները, ուր նկարիչը պատկերացուցած է սուրբ առաքեալին վարքը: Հոն կը տեսնենք առաքեալը, մէկ ձեռքին մէջ գիրք մը, միւսին մէջ դանակ մը, նշան իր քստմանի նահատակութեան: Քոչի նկարը կը ներկայացնէ Առաքեալը՝ որ զիւհար մը կը բռնէ, Հայոց թագաւորին ու թագուհիին ներկայութեան, որոնք քրիստոնեայ կը դառնան. եւ ահա երրորդը իստոնեայ կը դառնան Պողիմիոս (°°) թագին մէջ կը տեսնենք Պողիմիոսը: Չորրորդը եւ հինգերորդը քառակները կը պատկերացնեն Սուրբը՝ որ կը քարոզէ ժողովուրդին եւ քուրմերուն: Իսկ վերջինը ցոյց կու տայ Առաքեալին նահատակութիւնը, երբ Պողիմիոս թագաւորին Ամքահալ եղբայրը, մոզերու դրդումով, մորթալերձ կ'ընէ Քրիստոսի նուիրակը, հոռմէական դրօշի մը տակ, որուն վրայ գրուած է S. P. Q. R. տառերը:

Լատինացի քարանդակն Միաբանութիւնը չկրցաւ շարունակել հաւատքի համար տառապած եւ հալածական իր հիմնադիրներու հոգին: Հարստութեան հետ մտաւ անկարգապահութիւնը, ներքին ո-



ձենովայի Հայոց եկեղեցւոյն մէջ պահուած Ս. Դաստառակը

խեր, ատեւութիւն, կադ ու կոխ ծայր տուին, մինչեւ իսկ սպանութեան տանելով այդ օրհնութեան համար սահմանուած ձեռքերը:

Իննովկենտրոս Ժ. Սրբղ. Քահանայապետը՝ աւելորդ ու ժամաւրէպ համարեցաւ երբեմնի Բարսեղեաններու գոյութիւնը, եւ 1650ին ճիշտ 300 տարի յետոյ, մասնաւոր հրամանագրով ջնջեց այդ Միաբանութիւնը: Անչքացած եւ նուազած էր իրենց թիւը. 15 վարդապետ միայն եւ 10 եղբայրներ մնացած էին: Փափաքողները կրնային անցնիլ այլ կրօնական հաստատութիւններու մէջ: Իւրաքանչիւր քահանայ պիտի ստանար տարեկան 40 հոռմէական դեղին ոսկի, իւրաքանչիւր եղբայր՝ 20 դեղին ոսկի:

Ժառանգութեան պայքարն սկսաւ դանազան վրօնաւորական Միաբանութիւններու մէջ: Դոմինիկեաններ, Յիսուսեաններ ջանացին տէր դառնալ Բարսեղեաններու վանքին. սակայն 1655ի Յունուար 1ին՝

Ճենովայի դքսութիւնը պետական հրա-
մանադրով այդ կալուածներն ու եկեղե-
ցին յանձնեց Պառնասպիթ կոչուած միա-
բանութեան⁽¹⁾, որուն ձեռքն է այսօր
Հայոց Սուրբ Բարքողիմէոս եկեղեցին:

Եկեղեցին անշուշտ չէ պահած իր նախ-
նական ճարտարապետութիւնը: Վերանո-
րոգեաւ է զանազան անդամներ. երեք
նաւերով ու կամարներով առաստաղը՝
վերածուած է մէկ կամարակապի, եւ մի-
այն աւագ խորանի վրայ բարձրացող գլմ-
բէթը կը պահէ հին հայկական ութան-
կիւնը:

Չկան եղբայր Մարտիրի եւ եղբայր
Կուրիեմոսի շէրիմները. ոչ մէկ հայկա-
կան տապանաքար պահուած է: Նախո-
լէոնի ժամանակ փճացած են թանկագին
զիւանն ու վաւերաթուղթերը:

Հետաքրքիր հայ ճամբորդը յուսախար
պիտի մնայ փնտռելով այս տաճարին մէջ
ազգային հաճելի նշխարներ: Գաւիթին
մէջ պիտի վարդապետ պանդուխտ տապանա-
քարի մը վրայ աւելի պանդուխտ հայու
մը անունն ու պաշտօնանքը:

Այս է տապան Յայրապետ - ին
Որ է որդի Անանիայ - ին
Սա երկրէն է Գոխտան տան - ին
Եւ ի գեղջէ Նըջնաբերդ - ին
Վաղմանեցաւ Հայոց ք-վ - ին
Հագար հարիւր երեսուն եւ վեց - ին
Եւ Ապրիլի քսան եւ յնգ - ին

(1) 1957ի ընթացքին, Պառնասպիթ Հայրերը տօնե-
ցին այս եկեղեցեան 300ամեակը. յորելինա-
կան հանդէսներուն մաս կազմեց նաեւ հայ-
կական ծէսով հանդիսաւոր սուրբ պատարագ

Ով յանդիպի այս տապան - ին
Հայր մեր յերկինս շնորհ - ին
Վասն սիրուն Բրիտոս - ին

Քանիներ այսպէս տրտում ճակատա-
դրով, յանձնուած ալիքներու, եկեր եւ
մահացեր են այս օտար հորիզոնին տակ:
Տապանաքարին վերեւ Ս. Բարսեղի վի-
սանդրին դրուած է: Այդ մեծ Հայրապետն
ալ իր անունով առաջնորդեց հալածական
հայ կրօնաւորները այս ամերուն վրայ:
Անոնք դացին, օտարացան, մահացան
պատմութեան թեւերուն մէջ, եւ ինքը
հիմա մինակ է, կը նայի իր մարմարէ
աչքերով անթիւ հաւատացեալներուն ո-
րոնք կը մտնեն այս տաճարը՝ Բրիտոսի
Ս. Դաստառակն համբուրելու, առանց
ճանչնալու անոր Երեմիի տէրերը եւ ոչ
ալ եղբայր Մարտիրը յիշելու:

Ճենովա քաղաքին արեւելեան կողմը
ծամածուռ արահետ մը կը բարձրանայ
դէպի Մոնթալքոյ կոչուած թաղամասը
եւ կանգ կ'առնէ բարձրադիր հրապարակի
մը վրայ, Ս. Բարքողիմէոս Հայոց եկե-
ղեցին դրան առջեւ:

Ներկայիս ուրիշ հայ ընտանիք մը կը
բնակի անոր մօտ, բժշկապետ Նուպար
Արսլանեան, եւ ինքն ու իր ընտանիքը կու-
գան երբեմն կարդալու. Սուրբ Բարքողի-
մէոս Հայոց եկեղեցի...:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

մը. այդ առիթով էր որ մեզի հայթայթեցին
սոյն տեղեկութիւնները, քաղելով իրենց դի-
ւանական վաւերաթուղթերէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐԸ

Հայաստանի բարձրաւանդակը հին դա-
րերէ ի վեր մարտից մը եղած է հիւսիսէն
եւ հարաւէն, արեւելքէն եւ արեւմուտքէն
ներխուժող զանազան ցեղերու արշաւանք-
ներուն դէմ. հոն եկած եւ փչրուած են
անոնք մեր ընկերուն եւ ձորերուն, դաշ-
տերուն եւ գետերուն վրայ բար-
ձրացող բաղամթիւ բերդերուն եւ ամրոց-
ներուն առջեւ. դարեր շարունակ դիմա-
դրած են այս ամրութիւնները թշնամիներ-
ու դրոհին դէմ եւ փառաւոր էջեր թողու-
ցած մեր աւատական պատմական շրջանին
մէջ:

Հայաստանի բերդերը կարեւոր դեր մը
խաղացած են մեր հայ ժողովուրդին ճա-
կատադրական պայքարին մէջ, եւ անոր
գոյութեան եւ պահպանումին մեծագոյն
ազդակներէն մէկը եղած են:

Շատ են Հայաստանի մէջ բարձրացող
բերդերը, չըսելու համար հազարաւոր.
Հայաստանի բերդերը խորագրով պատ-
րաստած մեր ընդարձակ աշխատասիրու-
թեւէն քանի մը նմոյշներ պիտի տանք
հոս:

ԱԳԱՐԱԿԻ ԲԵՐԴԸ

Ագարակ անունով մեր նախնեաց մա-
տենադրութեան մէջ կը յիշուին շատ մը
դիւղեր, զանազան գաւառներու մէջ. այս-
պէս Արարատեան գաւառին մէջ կը յիշ-
ուին նոյն անունով չորս դիւղեր, իսկ
Սիւնեաց աշխարհին մէջ կը յիշուի նոյն
անունով գաւառ մը. այս՝ պատճառ եղած
է չփոթութեան եւ Ագարակ բերդը փո-
խադրուած երբեմն Սիւնիք. սակայն թով-
մա Արծրունիին Ագարակ բերդը շատ ո-

րոշ է որ Կորճէից ձախուկ գաւառի բեր-
դերէն է:

Վասպուրականի Աշոտի որդի՝ Գագիկի
մասին խօսելով կ'ըսէ. «Նախապատուէ
զիւր ազգային ոմն որում անուն էր Գա-
գիկ, տալով նմա զբերդն Ագարակայ, եւ
զգաւառն ձախուկ, եւ զօրագլուխ զնա ի
պարսիցն կացուցանէ մարձի»⁽¹⁾:

Նմանապէս Ապուրուանի տիրապետու-
թեան պատմութիւնն ընելով, կ'ըսէ թէ
«Կոչէ զԱշոտ եղբարբքն հանդերձ ի բերդն
կոտորոց, պատուասիրութեան ինչ աղա-
դաւ: Եւ անդէն ի միում գիշերի վալեալ
կապէ զնոսա եւ յղէ զԱշոտ եւ զԳուրգէն
ի բերդն Նկան կոչեցեալ, եւ տուեալ ի
բանտ պահէ մեծաւ զգուշութեամբ: Իսկ
զԳագիկ խաղացուցանէ ի ձուաշ գաւառ,
յամրոցն Շամիրամ. քանզի իրրեւ զմա-
նուկ տղայ խաբեալ էր զԱշոտ, տալով նը-
մա զբերդն Ագարակայ, հանդերձ ձա-
խուկն կոչեցեալ գաւառաւ, փոխանակ
առնելով զբերդն Նկան»⁽²⁾:

Ըստ այս վկայութեանց, ուրեմն, Ա-
գարակ բերդը կը գտնուի Վասպուրականի
ձախուկ գաւառին մէջ, եւ սահմանակից
է Պարսկահայաստանի⁽³⁾:

Արծրունեաց իշխանութեան բերդերէն
է Ագարակ, որուն շինութեան թուականը
թէեւ չի յիշատակուիր մեր պատմութեան
մէջ, սակայն հաւանաբար շինուած է Թ.
դարուն, Արծրունեաց իշխանութեան
փառքի շրջանին:

Ագարակ բերդը սահմանային բերդերէն
ըլլալով Արծրունեաց, շարունակ կոչուե-
րու թատր հանդիսացած է հայերուն եւ
պարսիկներուն միջեւ, եւ ձեռքէ ձեռք
խլուած: Թ. դարուն Շապուհ որդի Մար-

(1) Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Ար-
ծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 295:

(2) Անդ, էջ 303:

(3) Բնաշխարհիկ բառ., տպ. Վենետիկ, էջ 5: